**ԱՌԱՋԱՐԿ / ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ ԿԳՄՍՆ 2026-2028թթ. ՄԺԾԾ**

**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ/ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

| | |
|---|---|
| Կազմակերպության անվանումը՝ | «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ |
| Հասցեն՝ | Բուզանդ 1, 31, Երևան 0010 |
| Էլեկտրոնային փոստը՝ | info@masnakcayin.org |
| Հեռախոսահամարը՝ | 00374-93345939 |
| Պետական մարմնի անվանումը՝ | ՀՀ ԿԳՄՍ նախարարություն |
| Ներկայացման ամսաթիվը՝ | 02.04.2025թ. |

| |
|---|
| 1. Շահառուների որ խմբի շահերն է ներկայացնում դիտողության/առաջարկի հեղինակ կազմակերպությունը՝ |
| **Կազմակերպությունը ներկայացնում է հանրակրթության ոլորտի շահառուների, տվյալ դեպքում՝ սահմանամերձ համայնքների ՀՈՒՀ աշակերտների, ծնողների և ուսուցիչների շահերը:** |
| 2. Ներկայացվածը հանդիսանում է արդյոք այլ ՔՀԿ-ների կամ կազմակերպությունների հետ համատեղ մշակված դիտողություն/առաջարկ: Եթե այո, ապա նշել այն կազմակերպությունները, որոնք մասնակցել են դրա մշակմանը: |
| **Ներկայացվածը հիմնված է կրթության փորձագետների և ՔՀԿ-ների հետ (օր.՝ Դասավանդիր Հայաստան, Կրթական քաղաքացիական նախաձեռնություն և այլն) համագործակցությամբ և «Հայաստան Համահայկական հիմնադրամի» աջակցությամբ Արցախի սահմանամերձ 20 դպրոցներում հաջողությամբ իրականացված և կրթության որակի վրա դրական ազդեցություն ունեցած «Երկարօրյա դպրոց Արցախ» ծրագրի վրա:** |
| 3. Դիտողության/առաջարկի վերաբերյալ իրականացվել են արդյոք խորհրդակցություններ հիմնական շահառուների հետ՝ |
| **Ներկայացվող առաջարկի մշակմանը և իրականացմանը 2021թ.-ից ի վեր մասնակցել են կրթության փորձագետներ, վերապատրաստող ուսուցիչներ, ճարտարապետներ, սննդաբաններ և այլ մասնագետներ:** |
| 4. Կազմակերպությունը ենթադրում է արդյոք իր մասնակցությունը առաջարկվող ծրագրի/միջոցառման ֆինանսավորման, իրականացման կամ մոնիտորինգի գործընթացներում: Եթե այո, ապա նշել ենթադրվող մասնակցության ձևը *(լրացվում է միայն նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում):* |
| **Կազմակերպությունը ենթադրում է իր փորձագիտական և այլ մասնակցությունը և աջակցությունը ծրագրի մշակման և իրականացման, ինչպես նաև մոնիտորինգի գործընթացներում, ինչպես դա արվել է «Երկարօրյա դպրոց Արցախ» ծրագրի դեպքում:** |
| 5. Նշել այն ոլորտը, բյուջետային ծրագիրը և միջոցառումը, որին առնչվում է դիտողությունը/առաջարկությունը *(նոր նախաձեռնություն հանդիսացող առաջարկի դեպքում ծրագրի կամ միջոցառման դասիչները կարող են չլրացվել)*՝ |
| Ոլորտը՝<br>Կրթություն X<br>Մշակույթ ☐ |

Սպորտ

☐

Երիտասարդություն

☐

Արտաքին կապեր

☐

| | |
|---|---|
| Ծրագրի դասիչը և անվանումը՝ | 1146, Հանրակրթության ծրագիր |
| Միջոցառման դասիչը և անվանումը՝ | 11001, 11002, 11003 կամ նոր դասիչ. «Երկարօրյա ուսուցում սահմանամերձ բնակավայրերի դպրոցների տարրական և հիմնական մակարդակների համար» |

6. Նշել ներկայացված դիտողության/ առաջարկի բնույթը՝

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Դիտողություն | ☐ | Առաջարկություն | ☐ | Նոր նախաձեռնություն | X |

7. Նշել, թե ինչ հարցերի է անդրադառնում ներկայացված դիտողությունը/ առաջարկությունը *(կարելի է միաժամանակ նշել մի քանի տարբերակներ)*՝

| | | | |
|---|---|---|---|
| Նպատակներ | X | Ծառայության որակ | X |
| Գերակայություններ | X | Ծառայության մատչելիություն | X |
| Շահառուների շրջանակ | X | Ֆինանսական հաշվարկներ | |
| Սպառվող ռեսուրսներ | | Արդյունքային ցուցանիշներ | |
| Իրականացման եղանակներ | | Վերջնական արդյունքներ | |
| Նոր ծառայություններ | X | Նոր տրանսֆերտներ | |
| Նոր կապիտալ ներդրումներ | X | Արդյունավետություն | X |

Այլ՝ ______________________________

8. Ներկայացնել դիտողության/ առաջարկի բովանդակությունը *(100 բառի շրջանակներում)*՝

«Երկարօրյա ուսուցում սահմանամերձ բնակավայրերի դպրոցների տարրական և հիմնական մակարդակների համար» նոր միջոցառումը ենթադրում է երկարօրյա ուսուցման կազմակերպում Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանամերձ դիրք և խոցելի սոցիալական պայմաններ ունեցող 40 բնակավայրերի դպրոցների (որոնք ընդգրկված չեն կրթահամալիրների վերափոխման ծրագրում) 1-ից 9-րդ դասարանների աշակերտների համար: Այն հիմնված է Արցախի 20 սահմանամերձ դպրոցներում հաջողությամբ իրականացված «Երկարօրյա դպրոց Արցախ» ծրագրի վրա, ինչի արդյունքում խթանվել է դրական ներգաղթը, համայնքային զարգացումն ու կրթության որակի աճը: Միջոցառումը նախատեսում է մշակութային, սպորտային և դասապատրաստման և երկանգամյա առողջ սնունդ նախատեսող համապարփակ երկարօրյա ուսուցում, որը հիմնված է համայնքային համերաշխության և կարողունակությունների զարգացման հայեցակարգի վրա:

9. Ինչ օգուտներ են ակնկալվում առաջարկի իրականացման արդյունքում: Ինչպես է առաջարկի իրականացումն ազդելու թիրախային շահառուների, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների որակի վրա՝

**Առաջարկի իրականացման արդյունքում թիրախային շահառուները՝ նշված 40 բնակավայրերի շուրջ 20 000 աշակերտներն ու նրանց ընտանիքները շահելու են կրթության որակի բարելավման, երկարօրյա խնամքի արդյունքում զբաղվածության և գործարար հնարավորությունների աճի, համայնքային փոխօգնության մշակույթի ներդրման, ինչպես նաև միջառարկայական կարողունակությունների զարգացման միջոցով:**

10. Ինչ ժամանակահատվածում է նախատեսվում իրականացնել առաջարկը՝

**Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2026/2027 թթ. ուսումնական տարվա մեկնարկից և ենթադրում է շարունակականություն:**

11. Ընդհանուր գնահատականներով ինչ ռեսուրսներ (սարքավորումներ, աշխատաժամանակ, ֆինանսական միջոցներ և այլն) կպահանջվեն առաջարկի իրականացման համար՝

| # | Նկարագրություն | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Երկարօրյա ուսուցման համար ֆիզիկական նվազագույն պայմանների ստեղծում թիրախային դպրոցներում (մոդուլային կահույքի և սարքավորումների ձեռքբերման և շինվերանորոգման ծախսեր), մեկանգամյա ծախսեր (2026) | 2026:<br>320 000 000<br>(40 x 8 000 000) |
| 2 | Երկանգամյա սննդի ապահովում<br>(մեկ աշակերտին՝ 300 ՀՀ դրամ) | 2026: 450 000 000<br>(300 x 75 օր x 20000)<br>2026: 996 000 000<br>(300 x 166 օր x 20000)<br>2027: 996 000 000<br>(300 x 166 օր x 20000) |
| 3 | Յուրաքանչյուր 50 աշակերտի հաշվով Երկարօրյա հատվածի վերապատրաստված մանկավարժական մեկ աշխատողի հաստիք | 2026:<br>190 400 000<br>(400 x 119 000 x 4)<br>2027: 571 200 000<br>(400 x 119 000 x 12)<br>2028: 571 200 000<br>(400 x 119 000 x 12) |
| | Ընդամենը՝ | 4 094 800 000 |

12. Առաջարկը ենթադրում է արդյոք պետական բյուջեից բացի ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավում: Եթե այո, ապա ներկայացնել առաջարկի համաֆինանսավորման աղբյուրները, ուղղությունները և նախնական ֆինանսական գնահատականները:

**Ծրագրի համար այլ աղբյուրներից ֆինանսավորման ներգրավումը պարտադիր չէ, բայց այն ստեղծում է լրացուցիչ նյութական և բովանդակային ռեսուրսների ներգրավման բարենպաստ միջավայր: Պիլոտային փորձը ցույց է տալիս, որ Երկարօրյա ուսուցման մեջ ներգրավվում են ստեղծագործական կազմակերպություններ, մասնագիտական խմբեր, ստեղծվում են մասնագիտական կողմնորոշման և կրթական ռեսուրսների ստեղծման բազմազան հնարավորություններ: Ծրագրում կատարված ներդրումն արդարացվում է ստացված համայնքային, կրթական, տնտեսական և սոցիալական վերջնարդյունքով:**